ԳԱՅԱՆԵ ԱՅՎԱԶՅԱՆ

ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵՊԻ ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆԻ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայ տպագրության պատմության մի փոքրիկ դրվագ աղերսվում է պատմագիտական մտքի վիթխարի ներկայացուցիչներից մեկի՝ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի անվան հետ: Երեմիա Քյոմուրճյանի անձի եւ գործի համապարփակ քննությունն ու ներկայացումը թողնելով մեկ այլ առիթի՝ նշենք միայն, որ Լեոյի խոսքերով՝ այս «բախտի խորթ զավակը»[1], որ անարդարացիորեն ոչ պատշաճ վերաբերմունքի է արժանացել հայագիտության կողմից, այնքան պատկառազդու ժառանգություն է թողել մեզ, որ հիմք է տվել Հակոբ Սիրունուն՝ նրան համարելու «մարդ, ով կը փրկէ իւր դարը»:

Ամենեւին պատահական չէ հայ տպագրության համայնապատկերում Երեմիա Քյոմուրճյանի ի հայտ գալը. սա մի մարդ էր, որ ապրելով մշակութային շփումների բազմազանությամբ հարուստ մի միջավայրում եւ կրելով իր ժամանակի քաղաքական ու տնտեսական տեղաշարժերի հետեւանքով սկսված ողջ մտավոր առաջընթացի բնութագրիչները, որ ապրեց հայ կյանքը, այդ թվում եւ հայ պատմագիտական միտքը ԺԷ-ԺԸ. դարերում, միաժամանակ տիրապետում էր լայն ու բազմակողմանի կապերի՝ մեծ հեղինակություն վայելելով ոչ միայն հայկական միջավայրում, այլեւ օսմանյան պետական շրջանակներում, Կ. Պոլսում գտնվող եւրոպական դեսպանների եւ հոգեւոր ու գիտական գործիչների հետ շփումներ հաստատելով, այլ խոսքով՝ այս մարդը հաստատապես դուրս էր եկել միջնադարից:

Երեմիա Քյոմուրճյանի հիմնած տպարանի մասին մեր ունեցած աղքատիկ տեղեկությունների համար շնորհապարտ ենք Գրիգոր դպիր Մարգվանեցուն, որ Երեմիայի տպարանի փակվելուց մի քանի տարի անց ձեռք է բերում նրա տպատառերի կաղապարները եւ տպարանական ինչ-ինչ պարագաներ. «Եւ ի ներ մտածման բանիս՝ սկիզբն եդի արհեստ կաղապարաց տպարանիս: Ոչ ումեմնէ տեսանելով իմ. եւ ոչ ի Հռոմ գնալով, եւ ոչ ի յայլմէ արհեստաւորաց տեսեալ՝ եւ կամ ի նմանէ ուսեալ: Վասն որոյ՝ իբրեւ զմբեթացեալ ամպ ընկալաւ զիս ի սուգ տրտմութեան, եւ տարակուսանք վիհագոյն: Մինչ այց արար անմահին զօրութեամբն. որ ասէ ի սուրբ փրկական աւետարանին իւրում: Եւ որ հայցէ գտանէ, եւ որ բախէ՝ բացի, եւ որ խնդրէ՝ տացի նմա: Դարձեալ ի մէջ վեհագոյն ներ մտածական կրթութեանս ընկղմելով զորպիսութիւն իրացն. եկն օրհնեալ հոգի քեռմիրճի զատէ հռետոր եւ փիլիսոփա իմաստասէրն Երեմիա Չէլէպին: Զի եւ նա յառաջագոյն բազում ջանս՝ եւ աշխատանս կրեցեալ էր վասն գործարանիս՝ եւ յառաջ ածեալ: Եւ

1 **Լէո**, Հայկական տպագրութիւն, հ. Ի, Թիֆլիս, 1904, էջ 375:







տպագրեալ վասն փոքրաբանաց գրոյն՝ փոքրիկ գրքուկս երկուս: ...Որոյ կաղապարացն տեսեալ վեր ծանուցի եւ նոր իմն սկիզբն եղի»[2],- իր հրատարակած «Յայսմաւուրք»-ի հիշատակարանում գրում է Գրիգոր Մարզվանեցին: Ո՞վ էր այս կաղապարների հեղինակը, Կ. Պոլսո՞ւմ, թե՞ դրսում էին դրանք պատրաստվել՝ որոշակիորեն հայտնի չէ, սակայն Գրիգոր Մարզվանեցու վկայությունից պարզ է դառնում, որ քյոմուրճյանական տպատառերն այդ ժամանակներում արդեն ձեւավորված տպագրական ավանդույթների տեսակետից այդքան էլ բարձրավեստ եւ ակնահաճո չէին, այլ «զգիր նորին՝ էր նուազ եւ նիհար»[3]: Այստեղից կարելի է ենթադրել, որ, ամենայն հավանականությամբ, այդ կաղապարները պատրաստվել են ոչ թե այդ ժամանակներում արդեն գեղագիտական բարձր ճաշակ դրսեւորած հայկական տպագրության եւրոպական կենտրոններում, այլ հենց Կ. Պոլսում, հատկապես եթե նկատի առնենք Երեմիա Չելեպիից շատ առաջ՝ 1567 թ., սկիզբ առած պոլսյան տպագրական ավանդույթները՝ ի դեմս Աբգար դպիր Թոխատեցու եւ Կ. Պոլսի Ս. Նիկողայոս եկեղեցում նրա հիմնադրած տպարանի:

Հայտնի է, որ Աբգար Թոխատեցու որդի Սուլթանշահը հոր մահից հետո իր հետ վերցնելով նրա՝ Խորվիրապցի Առաքել աբեղայի պատրաստած տպատառերը, անցնում է Իտալիա, որտեղ 1584 թ. Հովհաննես Տերզնցու աջակցությամբ տպագրում է «Գրիգորեան նոր փօմարը եւ փօնացոյցը»[4]: Չի բացառվում, սակայն, որ այդ տպարանից ինչ-ինչ հետքեր մնացած լինեին Ս. Նիկողայոս եկեղեցում, որը օսմանյան պաշտոնյաների կամայական հարձակումներից զերծ պահելու նպատակով Երեմիա Քյոմուրճյանը վերածել էր դպրոցի, եւ հետագայում դրանք օգտակար լինեին տպարանական ձեռնարկումներում: Բացի այդ, Մ. Չամչյանը տեղեկացնում է, որ ինքը լսել է, թե Սիմեոնի տպատառերը, ոմանց պնդմամբ, «նաւաբեկութեամբ կորուսեալ եղեն», իսկ ուրիշների պատմելով՝ «տարան ի Կոստանդնուպօլիս եւ անդ կորեան»[5]: Եթե այս տեղեկությունը հավաստի է, ապա ե՞րբ են այս տառերը հայտնվել Կ. Պոլսում, արդյոք Ոսկան վարդապետի մահից անմիջապես հետո (1675 թ.), թե ավելի ուշ՝ դժվար է սպառիչ պատասխան տալ: Ուշագրավ է, սակայն, որ իր «Հարցմունք եւ պատասխանիք» երկը Երեմիա Քյոմուրճյանը աշխատասիրել է Ոսկան վարդապետի երբեմնի գործակից Թադեոս Համազասպյանի հետ միասին 1681 թ. Կ. Պոլսում՝ «ընդ հովանեաւ Ս. Լուսաւորչին»: Այս հանգամանքը ստիպում է Ն. Ակինյանին ենթադրել, որ Թադեոս Համազասպյանը Մարսելից եկավ Կ. Պոլիս եւ հորդորեց Երեմիա Չելեպիին ձեռնարկել տպագրության գործը՝ «ընծայելով ինք զինքը պատրաստ դարձնելու գործարանը»: Թադեոս Համազասպյանի եւ Երեմիա Քյոմուրճյանի տպագրական համագործակցությունը հնարավոր է, հատկապես եթե նկատի ունենանք, որ նրանցից ամեն մեկն իր շահադիտությունն ուներ այս գործում, սակայն

2 «Յիշատակարան Գրիգորի դպրի Մարզուանեցւոյ». տե՛ս «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706, էջ ԹՃԼԴ.:

3 Անդ:

4 Տե՛ս **Ա. Երիցեան**, Պատմական տեսութիւն հայ տպագրութեան. «Փորձ» ազգային եւ գրականական միամեայ հանդէս, թ. IV, Տփխիս, 1881, էջ 6:

5 **Մ. Չամչեան**, Պատմութիւն Հայոց, հ. Գ., Վենետիկ, 1786, գիրք Զ., գլ. ԼԱ.: Նույն տեղում պատմաբանը հայտնում է, որ վենետիկյան միաբանության տպարանում օգտագործել են Վանանդեցիների կաղապարները, որոնք Մխիթար Սեբաստացին գնել է Ղուկաս Վանանդեցու մահից հետո:

քյոմուրճյանական տպարանի ստեղծման հիմնական շարժառիթը համարել Թադեոս Համազասպյանի հակառոսական նկրտումներն ու դիպավորությունները՝ չարդարացված չափազանցություն կլինի: Այլ հարց է, որ Թադեոս Համազասպյանին կարելի է դիտարկել իբրեւ եւս մեկ հնարավոր օղակ Ռոսկանի եւ Երեմիայի տպարանների միջեւ ենթադրյալ աղերսների շղթայում: Բացի այդ, հայտնի է, որ Ռոսկանի ազգականներից ոմն Պետրոս Լատինացի 1705 թ. գալիս է Կ. Պոլիս եւ Բերայում «մանր գրովք» Աստվածաշունչ տպագրում՝ «օրինակեալ ըստ ամենայնի ի տպագրեալ Ատուածաշնչէ Ռոսկանայ վարդապետի»[6]: Այնուամենայնիվ, այս օրինակները, եթե անգամ հարյուրներով լինեին, հիմք չեն տալիս խոսելու փաստարկված իրողությունների մասին եւ մնում են սոսկ ենթադրություններ:

Սուղ, միմյանց կրկնող եւ նկարագրական բնույթի են տեղեկությունները Երեմիա Քյոմուրճյանի տպագրած երկու գրքի վերաբերյալ[7]: 1677 թ. Երեմիա Քյոմուրճյանի տպարանում լույս է տեսնում Ներսես Շնորհալու՝ այդ շրջանում մեծ համարում վայելող «Յիսուս Որդի» երկը[8]: Գրքի «Յիսուս Որդի» վերտառությունը խիստ պայմանական է, քանի որ ներառում է Ներսես Շնորհալու երկի մի անտիպ մասը: Գիրքը սկսվում է «Բարձրացուցէք» ճառով, խաչափայտին նվիրված երկու այլ ոտանավորներով, Ս. Հեղինեին նվիրված ձոնը (որի հեղինակը Ա. Ղազիկյանի ենթադրությամբ պետք է լինի տպագրիչը)[9], ապա հաջորդաբար զետեղված են Շնորհալու ներբողն առ երկնային իշխանություն եւ, ամենայն հավանականությամբ, Երեմիա Չելեպիի գրչին պատկանող խաղիկներ, հանելուկներ եւ տարատեսակ ոտանավորներ. այս շարքն ընդմիջարկվում է ցանկով, ապա եզրափակվում տաճկահառն հայերեն քառատողերով: Գիրքը փոքր է, խառնիխուռն եւ անհարթ մանրագիր, բաղկացած է 6 թերթից, որոնցից յուրաքանչյուրը ստորեւ ունի ա-ժզ. թվահամարը, որոնց ընդհանուր գումարը 96 էջ է:

1678 թ. լույս տեսավ Երեմիա Քյոմուրճյանի տպագրական գործունեության երկրորդ եւ վերջին արգասիքը՝ «Պատմութիւն Տեղեաց տնօրինականաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ի Սուրբ Երուսաղէմ եւ ընդ գաւառսն: Զպատմողաբարն ոտաշարեալ,

6 **Մ. Չամչեան**, նշվ. աշխ., գիրք Զ., գլ. ԼԱ.:

7 Տե՛ս **Ա. Երիցեան**, Պատմական տեսութիւն հայ տպագրութեան, էջ 15. **Գ. Զարբհանալեան**, Հայկական մատենագիտութիւն, Վենետիկ, 1883, էջ 176, 672-673. **Գ. Զարբհանալեան**, Պատմութիւն հայկական տպագրութեան, Վենետիկ, 1895, էջ 133-134. «Պատմական տեսութիւն հայ տպագրութեան մինչեւ դասնեաիններորդ դարը». «Արշալոյս Արարատեան», 1881, թ. 1178. **Տ. վ. Պալեան**, Հայ աշուղներ ու ժողովրդական հայ երգիչներ. «Բիւրակն», 1898, թ. 34-35, էջ 612. **Յ. Մրմրեան**, Հայ մեծատունները. «Բազմավէպ», 1901, թ. 3, էջ 118. **Լ.Էջ.**, նշվ. աշխ., էջ 367-378. **Ա. Ղազիկեան**, Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, հ. Բ., Վենետիկ, 1905-1912, էջ 237-238. **Թէոդիկ**, Տիպ ու գաղ, Կ. Պոլիս, 1912, էջ 54. **Ա. Ալպոյաճեան**, Զորսհարիւրամեակ հայ տպագրութեան. «Կոչնակ», Նիւ Եորք, 1912, թ. 5, էջ 112. **Մ. Աղանունի**, Միաբանք եւ այցելունք հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, էջ 136. **Ն. Ադամյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ., Երեւան, 1944, էջ 140. **Գ. Լեւոնյան**, Հայ գիրքը եւ տպագրության արվեստը, Երեւան, 1958, էջ 117. «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512-1800)», Երեւան, 1963, էջ 31. **Ն. Սիրունի**, Պոլիս եւ իր դերը, հ. Ա., Պէյրութ, 1965, էջ 660. **Ռ. Իշխանյան**, Հայ գրքի պատմություն, հ. 1, Երեւան, 1977, էջ 385-386. "Catalogue of early Armenian books", by Vrej Nersessian, 1980, էջ 19 եւ այլն:

8 Քյոմուրճյանական հրատարակությունը հայ իրականության մեջ «Յիսուս Որդու» արդեն չորրորդ հրատարակությունն էր. տե՛ս **Ա. Երիցեան**, Պատմական տեսութիւն հայ տպագրութեան, էջ 8- 10, 15:

9 **Ա. Ղազիկեան**, նշվ. աշխ., էջ 237:

զոր տեսեալ տէր Յովսէփ վարդապետ հրամանատար տեառն Եղիազար Կաթուղիկոսին Երուսաղէմայ, կամակցութեամբ տեառն Սուքիաս բարունապետի եղուն տպագրել ի փառս փրկագործութեան Քրիստոսի եւ ի պարծանս քրիստոնէութեան հաւատոյս: Երախայրեցուցեալ առ Հոգեւոր տէրն: Ընաբանիդ ԽԷ. Տնօրինի թիւ Ի. եղանակէ: Խընդա՛յի՛ երբ ա՛սէի՛ն թէ գնամք ի յԵ՛րուսա՛ղէ՛մ. Հասեալ լինէին ոտք մեր, առ դրբունս քո Երուսաղէմ. Զքաղաքդ Աստուծոյ տեսնուլ Զփա՛ռս քո ա՛յ Երուսաղէմ» գիրքը[10]: Գիրքը լույս է ընծայվել Երեմիա Քյոմուրճյանի հեղինակությամբ, ներկայացնում է Երուսաղեմի սրբավայրերի համառոտ նկարագրությունը՝ «Տնօրինական տեղեաց» 15 պատկերներով, որը գրի է առել Քյոմուրճյանը «Պեյազ ընծայեալ». **պեյազը**, ըստ թվահաշվի՝Հայոց ՌՃԺԴ. թվականն է (1665 թ.), Եղիազար Այնթապցու հակաթոռ կաթողիկոսության երրկրորդ տարին՝ դեպի Երուսաղեմ կատարած ուխտի շրջանակներում: Գրքի վերջընթեր էջում որոշակի գրված է նաեւ տպագրության թվականը. «Էհպապ Քրիստոսի թուէք, Եւ զաջ իմ ի Հայս յիշեցէք. Ի բարեացդ խնդրի բարիքն. Միշտ զբարին Յինէն մի՛ խնայէք»: **Էհպապը** փրկչական 1678 (7+70+800+1+800) թվականն է, իսկ **զաջ իմ** եւ **Յինէն** բառերը ցույց են տալիս Հայոց ՌՃԻԷ. (6+1+900+20+200; 300+20+400+7+400) թվականը:

Ինչպես արդեն նշեցինք, հարցի քննության պատմությունը շատ սակավաթեր է, պատկերը՝ աղքատիկ: Այնուհանդերձ, ուսումնասիրողների մի փոքրաթիվ խումբ, հիմք ընդունելով մինչ օրս հայտնի սկզբնաղբյուրների վկայությունները, ինչ-ինչ եզրակացություններ է անում՝ փորձելով լուսաբանել հայ տպագրության պատմության՝անհասկանալիորեն մուգ շղարշով պատված այս դրվագը: Հայտնի է, որ Քյոմուրճյանի պատմագրական ժառանգությունը ԺԷ. դարի հայոց պատմության եւ մասնավորապես ներքին կյանքի անցքերի ու իրադարձությունների ուսումնասիրման համար առաջնային եւ, չենք վարանի ասել՝ թերեւս ամենից համապարփակ ընդգրկվածությունն ունեցող սկզբնաղբյուրն է: Շատ հեղինակներ՝ սկսած Մխիթարյան հայրերից մինչեւ ժամանակակից հետազոտողները, իրենց ուսումնասիրությունների ընթացքում հիմք են ընդունել Երեմիա Քյոմուրճյանի գործերը, սակայն պետք է նկատել, որ դեպքերի ու իրադարձությունների գրառման այս անխոնջ եւ բծախնդիր հեղինակը, որ երբեմն կարող է օրվա ժամերի ճշգրտությամբ տեղեկություններ հաղորդել, զարմանալի կերպով լռում է իր հիմնած երկամյա դպրարանի մասին, ինչը թերեւս չի կարելի պատահական համարել:

Երեմիա Քյոմուրճյանի դպրարանը պատվիրված գործ էր եւ, ինչպես կարծում են ուսումնասիրողներից շատերը, նրա անմիջական նախաձեռնությամբ, այն էլ՝ «յանկարծ ու անսպասելի» կերպով չէ, որ հիմնադրվել է: Եթե նկատի առնենք, որ անգամ մեր օրերում մերկ ձեռքերով դպրարան չես հիմնի, ապա ուսումնասիրվող ժամանակաշրջանում, երբ տպագրական գործունեությունը հստակ քաղաքական նպատակներ էր հետապնդում, սոսկ իմաստասիրությունից ու գրասիրությունից դրդված՝ անհապը չէր կարող դպրարան հիմնել: Այն, որ Քյոմուրճյանը պատվեր էր կատարում, հստակ երեւում է նրա գրքի տիպոգրաֆերթին զետեղված հետեւյալ տողերից. «Զպատմողաբարն ոտաշարեալ, զոր տե-

10 Գրքի բնօրինակը գտնվում է Վենետիկի Մխիթարյան մատենադարանում, սակայն լուսապատճենները զետեղված են համացանցում, տե՛ս www.digilib.am:

սեալ տէր Յովսէփի վարդապետ հրամանատար տեառն Եղիազար Կաթուղիկոսին Երուսաղէմայ, կամակցութեամբ տեառն Սուքիաս ըսբունապետի եւրուն տպագրել ի փառս փրկագործութեան Քրիստոսի...», ավելին՝ հիշատակարանում նա գրում է, որ կաթողիկոսի (իմա՛ Եղիազար Այնթափցու) նվիրակը գալիս է Կ. Պոլիս, այստեղ տպագրել տալիս «Տնօրինական տեղիք»-ը եւ ուղարկում Երուսաղեմ: Պատմական վկայություններից հայտնի է, որ արեւմտահայության հովվապետությունը ստանձնելու եւ ազգային կյանքում հարաճուն ազդեցություն ունենալու դիտավորությամբ Եղիազար Այնթափցին՝ իր կուսակիցների հովանավորությամբ, 1665 թ. օսմանյան կառավարությունից ձեռք բերեց հակաթոռ կաթողիկոսության հրովարտակ: Կաթողիկոսական լիազորություններն ամեն գնով պահպանելու եւ ամրապնդելու համար անձնուրաց եւ ամենուրաց պայքարի նետված Եղիազար Այնթափցու գործունեության համապատկերում պոլսական այս տպարանի գործոնը ամենեւին չի օտարվում, ավելին՝ սա ժամանակակից եւ նպատակային մի գործիք էր, որ հնարավորություն կտար մի կողից՝ ստեղծելու սեփական քարոզչական մեքենան, իսկ մյուս կողմից՝ արեւելյան շուկայում խոչընդոտելու էջմիածնական տպարանի գործունեությունը եւ տպագրական եկամուտները ուղղելու սեփական գրպանը:

Հայ պատմագրության մեջ այս ժամանակաշրջանի իրադարձությունները, մասնավորապես Հակոբ-Եղիազարյան կամ, այլ խոսքով, Ջահուկյանների եւ Եղիազարյանների, ներսեցիների եւ դրսեցիների միջեւ չարչրկված այս պայքարը ներկայացնող հակամետ ուժերը, պարբերաբար փորձել են Երեմիա Քյոմուրճյանին ընդգրկել յուրաքանչյուրն իր խմբավորման մեջ: Եղիազար Այնթափցու՝ հակաթոռ կաթողիկոսություն հիմնելու նախաշեմին, Քյոմուրճյանը, ճիշտ է, հանձն առավ ամբողջ համայնքի անունից բանակցել նրա հետ, սակայն պնդել, թե դրանից հետո նրանք թշնամացան, եւ Երեմիան հարեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Դ. Ջուղայեցուն՝ միանգամայն սխալ է: Կասկածից վեր է, որ Քյոմուրճյանը բարիդրացիական հարաբերություններ է ունեցել Հակոբ Կաթողիկոսի հետ. ամենայն հավանականությամբ, հեգաբարո այս ծերունու վարքուբարքը եւ եղերական մահը սրտառուչ ազդեցություն են թողել Երեմիայի վրա, ինչը երեւում է Կաթողիկոսին ձոնած նրա «Ողբ»-ից,[11] մյուս կողմից՝ Կաթողիկոսի՝ Կ. Պոլսում եղած ժամանակ, նրանց քաղաքական հանդիպումներից բացի, Երեմիա Քյոմուրճյանը Հակոբ Ջուղայեցու հանձնարարությամբ ձեռնամուխ է եղել «Պատմութիւն համառօտ Դ.Ճ. տարւոյ Օսմանցոց թագաւորացն» երկի շարադրմանը[12]: Այս ամենով հանդերձ, սակայն, Երեմիա Քյոմուրճյանը, միանշանակ, եթե ոչ Եղիազարյան կուսակցության, ապա Այնթափցուն անմիջապես մոտ կանգնած մարդ էր, ինչը երեւում է թե՛ Քյոմուրճյանի պատանեկան հիշողություններից եւ թե՛ Եղիազարի բազմաթիվ բանտարկությունների ու փախուստների ժամանակ նրանց սրտառուչ հանդիպումների երկար շղթայից: Թերեւս այս անխախտ բարեկամությունն էր պատճառը, որ Երեմիան չիտրշեց մասնակից դառ-

11 **Մ. եպս. Նշանեան**, Երեմիա Չելէպի Քէօմիւրճեանի Գանձն ի մահ Յակոբ Կաթողիկոսի. «Հանդէս ամսօրեայ», 1933, թ. 9-10, էջ 588-595:

12 Տե՛ս **Երեմիա Քեօմիւրճեան**, Պատմութիւն համառօտ Դ.Ճ. տարւոյ Օսմանցոց թագաւորացն, աշխատ.՝ Ժ. Ավետիսյանի, Երեւան, 1982:

նալ այն դիպավորությանը, որ Կ. Պոլսի տպարանն ուներ ընդդեմ Եւրոպայում դեգերող էջմիածնական տպարանի, եւ գուցե հենց այս հանգամանքով էլ բացատրվում է տպարանական գործունեության մասին նրա համր լռությունը, բացառությամբ մի դեպքի, երբ նա ժամանակի ազդեցիկ հայերից մեկին՝ Ապրո (Աբրահամ) Չելեպիին ուղղված մի ուղերձում Ապրոյի տպարանական ձեռնարկումներին մի փոքրիկ անդրադարձ ունի.

Բայց, Չելէպի, ի քէն հայցեմ,
Մեծ խնդիրք է, զոր աղաչեմ,
Ի միտդ ունիս բան մի կարծեմ,
Չտպագրութիւնն գըրոց ասեմ:
Զայդ հան ի մտացդ, ո՛վ գերունակ,
Զի չէ պատեհ՝ այլ գործ պիտակ,
Ոչ լինել քեզ այդ ընդունակ,
Զի չէ պտուղ այդ բարունակ:

***

Սէր իմ սրտիս, ո՛վ Չելէպի,
Քեզ լինիցիմ ծառայ՝ գերի,
Մի՛ հետեւիլ զայն որ ասցի,
Տպագրութեանն անպատեհի:

***

Այս եւեթ զոլ խնդիրս յայտնի,
Զի թէ տեսոյդ չեմ արժանի,
Մի՛ մի՛ առնել զգործն փանաքի,
Զի է՛ մախիծ՝ ի երկիւղալի[13]:

Տպարանական իր գործունեության ընթացքում ինչն էր, որ այսքան վախեցրել եւ ստիպում էր Երեմիա Քյոմուրճյանին հետ կանգնել տպագրության գործից. հստակ տեղեկություններ չկան: Ուսումնասիրողների մի ստվար մաս միաբերան պնդում է, որ նրան խանգարեց այդ ժամանակաշրջանում Կ. Պոլսում տիրող «խավարաբորբ տգիտությունը»[14], նշենք, սակայն, որ Ա. Ալպոյաճյանը, ավելի խորքային մի հանգամանքի վրա հրավիրելով ընթերցողի ուշադրությունը, պնդում է, որ Երեմիա Քյոմուրճյանի տպարանի փակման պատճառ դարձան Եղիազար Այնթափցու եւ Մարտիրոս Ղրիմեցու միջեւ գոյացած բիրտ հակամարտության հետագա դրսեւորումներն ու հետեւանքները[15]. Երուսաղեմի պատրիարքական աթոռը հերթական անգամ տանուլ տված Մարտիրոսը հաս-

13 «Օրագրութիւն Երեմիա Չելէպի Քէօմուրճեանի», հրատ. Մեսրոպ արք. Նշանեան, Երուսաղէմ, 1939, էջ 562-563:

14 Տե՛ս **Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան**, Սրամայոյց պատմութիւն, հ. Ա., հրատարակեց եւ ծանոթագրեց՝ Տօքթ. Վ. Թորգոմեան, Վիեննա, 1913, էջ 178-184. **Ն. Ակինեան**, Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան, Վիեննա, 1933, էջ 52, 182-183. **Ն. Սահակյան**, Երեմիա Քյոմուրճյան, Երեւան, 1964, էջ 32-34:

15 Մատենադարանի արխիվ, Ա. Ալպոյաճյանի ֆ., թղթ. 33, վավ. 58/124: Ա. Ալպոյաճյանի ինքնագիր այս վավերագրին շնորհակալությամբ ծանոթացել եմ Մատենադարանի ավագ գիտաշխատող Ա. Աստոյանի շնորհիվ:

տարվում է Կ. Պոլսի Ս. Աստվածածին եկեղեցում եւ, Եղիազարից անկախ, իրեն Երուսաղեմի պատրիարք հռչակելով՝ սկսում է համայնքից տուրքեր ժողովել, որը եւ առաջ է բերում Կ. Պոլսի գործող պատրիարք Անդրեաս Երեցի դժգոհությունն ու գայրույթը: Ի պատասխան՝ Մարտիրոս Կաֆացին դրամը չի խնայում՝ Անդրեասին պաշտոնանկ անելու եւ փոխարենը տգետ մի երեցի՝ Կարապետ Կեսարացուն (ժողովուրդը հեգնանքով «Կրպօ» էր կոչում) Կ. Պոլսի պատրիարքի պաշտոնում նշանակելու: Այս անհեթեթ քայլից վրդովված՝ Երեմիա Քյոմուրճյանը Կրպոյին այպանող մի նամակով դիմում է իր երբեմնի բարեկամ Մարտիրոսին, վերջինս նամակը կարդալուց հետո կնքում եւ ուղարկում է Կրպոյին, ապա նրանք հետամուտ են լինում ձերբակալելու Երեմիային, որ հազիվ հաջողացնում է թաքնվելով մազապուրծ լինել: Այս միջադեպը, սակայն, Մ. Չամչյանը, Երեմիա Քյոմուրճյանի հետեւությամբ, թվագրում է 1676-ով՝ Կ. Պոլսի տպարանի փակումից դեռեւս երկու տարի առաջ[16], ուստի կարծում ենք, որ տպարանի գործունեության դադարումը միայն Մարտիրոս-Եղիազար հակամարտությամբ պայմանավորելը սխալ կլինի: Շատ հնարավոր է, որ հալածանքները Քյոմուրճյանին հետապնդել են տպարանի հիմնադրումից ավելի վաղ, եւ հենց դա է պատճառ հանդիսացել[17], որ նա, ինչպես վերը տեսանք, խնդրում է Ապրո Չելեպիին ձեռնպահ մնալ այնպիսի մի վտանգավոր գործից, ինչպիսին տպարանի հիմնադրումն էր: Բայց նրա թախանձանքներն անարձագանք են մնում Եղիազար Այնթափցու եւ Ապրո Չելեպիի կողմից, ավելին՝ Էջմիածնի Մայր Աթոռից եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսից ոչինչով հետ չմնալու եւ նրան քաղաքական ու տնտեսական անկլավի մեջ վերջնականապես խեղդելու իրենց մտայնությամբ, ի հեճուկս բոլոր ընդդիմադիրների, նրանք հիմնում են Կ. Պոլսի տպարանը՝ զոհաբերելով, ըստ էության, նաեւ իրենց խնամյալ Երեմիայի՝ այդ պայքարում ձեռնպահ մնալու թաքուն նպատակները, քանի որ այդ ժամանակ Կ. Պոլսում չկար նրանից ավելի գիտակ մեկը, որ գլուխ բերեր այդ գործը:

Ո՞րն էր, այնուամենայնիվ, այս տպարանի կարճատեւ կյանքի պատճառը. միամտություն է կարծել, թե միջոցների կամ օսմանյան կառավարող բարձրագույն շրջանակներ ելումուտ անող Ապրո Չելեպիի ազդեցության պակասը: Իրերի հարաբերակցությունն արդեն իսկ փոխվել էր, երբ 1679 թ. Կ. Պոլիս եկավ Հակոբ Դ. Ջուղայեցին. Եղիազար Այնթափցու հետ բանակցելու նրա ցանկություններն անկատար մնացին. մինչ Եղիազարը կժամաներ, Կաթողիկոսը 1680 թ. օգոստոսի 1-ին (ըստ որոշ ուսումնասիրողների՝ օգոստոսի 2-ին) վախճանվեց Կ. Պոլսում: Ազգային ուժերի պարտադրմամբ՝ Եղիազար Ա. Այնթափցին 1681 թ. բազմեց Էջմիածնի կաթողիկոսական աթոռին:

16 **Մ. Չամչեան**, նշվ. աշխ., գիրք Զ., գլ. ԼԹ.:

17 Այս դիմումի պատճառներից մեկը կարող էր լինել նաեւ Եղիազար Այնթափցու հակաթոռ կաթողիկոսության հանդեպ Երեմիա Քյոմուրճյանի ունեցած երբին անհամաձայնությունը, որը պիտի արտահայտվեր նաեւ այդ ձեռնարկին ծառայող տպարանին դեմ լինելով: